


Հաստատված է
“Ակադեմիական փոխճանաչման և
շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն”
հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդի նախագահ՝ ՀՀ
ԿԳ նախարար՝ Արմեն Աշոտյան



“20” փետրվար 2011թ.

Տարեկան հաշվետվություն
2011թ.

2006թ.-ից ի վեր Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ԱՓՇԱՏԿ)՝ որպես հայկական Էնիկ-Նարիկ(Enic-Naric), տրամադրում է որակավորումների ճանաչման ծառայություններ, որոնք ուղղված են անհատներին, գործատուներին, կրթություն տրամադրողներին և բոլոր այն շահառուներին, ովքեր ունեն հարցումներ ազգային և այլ երկրների կրթական համակարգերի, շնորվոդ որակավորումների և վերապատրաստումների վերաբերյալ:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված են 2010թ.-ին հիմնադրամի կողմից իրականացված աշխատանքները:

1. Ճանաչման վերաբերյալ կրթական օրենսդրական դաշտի լրամշակում

2009-2010թթ.-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ի կողմից ԿԳ նախարարություն են ներկայացվել օրենսդրական լրամշակումների առաջարկներ, որոնք վերաբերվում են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքում ակադեմիական և մասնագիտական ճանաչում, շարժունություն, կանոնակարգվող մասնագիտություն հասկացությունների ներառմանը, եռաստիճան կրթական համակարգի սահմանմանը և տրանսազգային կրթօջախների համար պետական հավատարմագրման անհրաժեշտությունը:

2008թ.-ին ԱՓՇԱՏԿ-ի հոգեբարձուների խորհուրդի կողմից հաստատվել է «Օտարերկրյա կրթական որակավորումների ճանաչման, ճանաչման և խորհրդատվության ապահովման մասին» կարգը: Կարգի համաձայն ՀՀ-ում որակավորումների ճանաչումը և խորհրդատվության տրամադրումը իրականացվում է անվճար:

Սակայն, հարկ է նշել, սր Լիսաբոնի ճանաչման կոնվենցիան սահմանում է նաև վճարովի ծառայությունների հնարավորությունը՝ տվյալ երկրի ազգային տարադրամով և նվազագույն աշխատավարձին համապատասխան:

Ուստի 08.09.2010թ.-ի ԱՓՇԱՏԿ-ի կողմից ԿԳ նախարարին ներկայացվեց «Օտարերկրյա կրթական որակավորումների ճանաչման և խորհրդատվության ապահովման մասին» կարգում լրացումների և փոփոխությունների փաթեթի նախագիծը՝ գանձվող վճարների դրույքաչափերով: Ի պատասխան՝ ԿԳ նախարարությունը առաջարկում է վերանայել գանձվող վճարների դրույքաչափերը և օրենսդրորեն հիմնավորել տվյալ գործունեության տեսակով զբաղվելու հնարավորությունը:

Կից ներկայացնում ենք վճարների դրույքաչափերի նոր առաջարկը (հավելված 1): Կարևոր է նշել, որ վճարովի համակարգի ներմուծումը չի հակասում ԱՓՇԱՏԿ-ի կանոնադրությանը, և համաձայն 7-րդ և 8-րդ կետերի.

«Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության տեսակներով՝ օրենքով սահմանված կարգով»:

2. Օտարերկրյա որակավորումների ճանաչում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում

2010թ.-ին շարունակվեց դեռևս անցած տարիներից սկիզբ առած սերտ համագործակցությունը ՀՀ պետական մարմինների՝ մասնավորապես Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Քաղաքացիական ծառայության խորհրդի, Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, Արտաքին գործերի նախարարության, Դատական դեպարտամենտի, Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հետ: Արտաքին գործերի նախարարության հետ

